Հայտարարություն N1

ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի «Լուսագյուղի մանկապարտեզ»զ ՀՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ 1 դաստիարակի՝ 0,585 դրույքաչափով, երաժշտական դաստիարակի՝ 0,25 դրույքաչափով և մեթոդիստի՝ 0,25 դրույքաչափով, թափուր պաշտոնները համալրելու համար:

Մրցույթին կարող են մասնակցել ԿԳՄՍ նախարարի 2024 թվականի մարտի 27-ի N 20-Ն հրամանով սահմանված տարիֆավորակավորման պահանջներին համապատասխանող անձիք: Վերոհիշյալ պաշտոնների համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ հիմնադրի դրույքաչափի:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարի կողմից հաստատված հարցաշարերի: Մրցույթին մասնակցելու համար անձը պատասխանատու աշխատակցին պետք է ներկայացնի՝

1.դիմում (Ձև 1)

2.կրթության մասին փաստաթուղթ՝ դիպլոմ

3.անձը հաստատող փաստաթուղթ

4.աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ

5.ինքնակենսագրություն ՝ Ձև 4

6.լուսանկար 3x4չափի

7.այլ պետության քաղաքացիները՝ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ

8.ՀՀ արական սեռի ներկայացուցիչները ներկայացնում են զինվորական գրքույկ,կամ զինվորական կցագրման վկայական:

9.հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչում հավաստող փաստաթղթեր(առկայության դեպքում)

10.որակավորման տարակարգ(առկայության դեպքում) Փաստաթղթերի պատճենները անհրաժեշտ է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև հուլիսի 3-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00ից - 16:00-ն, բացի ոչ աշխատանքային օրերից:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը կանցկացվի 2026 թվականի հուլիսի 8-ին ժամը՝ 14:00-

ին, <<Լուսագյուղի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի շենքում /գ. Լուսագյուղ ,Ն.Դարբինյան 6:

Տեղեկությունների համար զանգահարել 098700597 հեռախոսահամարով: